# ՆԿԱՐԱԳԻՐ

**առաջարկվող ապրանքի ամբողջական**

ԷՄ ԷՌ ԷՆ ՍՊԸ-ն ԱՄՄՀ-ԷԱՃԱՊՁԲ-25/40 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

| Չափաբաժնի համար | Առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագիրը |
|---|---|
| 1 | Կահույքի ոճը՝ loft Սենյակի ընդհանուր մակերեսը՝ մոտ 34քմ Մատակարարման ժամկետը՝ համաձայնագիրն ուժի մեջ մտնելու օրվանից 21 օրացուցային օր Մատակարարման հասցեն՝ ք. Մասիս, Կենտրոնական հր. թիվ 4, 4-րդ հարկ Մատակարարման պայմանները՝ բեռնումը, բեռնաթափումը և վերջնական տեղադրումն իրականացվելու է մատակարար ընկերության հաշվին և միջոցներով Տեխնիկական բնութագիրը՝ ըստ էսքիզների և ստորև ներկայացված տեխնիկական առաջադրանքների Երաշխիքային ժամկետը՝ նվազագույնը 2 տարի Կատարողը պարտավորվում է մատակարարելու Մասիս համայնքապետարանի 4-րդ հարկում գտնվող խորհրդակցությունների սենյակի կահույքը՝ ըստ կից ներկայացված էսքիզներին համապատասխան: Վերջնարդյունքը պետք է ստացվի էսքիզների ճշգրիտ կիրառմամբ (թույլատրելի շեղումը՝ չպետք է գերազանցի 3%-ը), իսկ փոփոխությունները պետք է կատարվեն բացառապես Պատվիրատուի համաձայնությամբ: Ստորև ներկայացվում է կահույքի տեղակայման սխեմատիկ բնութագիրը՝ ըստ տեղադիրքերի. Արևելյան պատ (պատուհաների հատված) Պատուհանների միջև առկա սյուների երեսպատում՝ շպոնապատ МДФ-ի և կաղնու փայտի համադրությամբ, բարձրակարգ ներկերով և լաքով եռաշերտ մշակմամբ: Մարմարե կամ գրանիտե պատուհանագոգերի տեղադրում, որի գույնը և տեսքը պետք է համաձայնեցվի Պատվիրատուի հետ: Արևմտյան պատ և առաստաղ Դեկորատիվ ֆոտոպաստառ, գունավոր տպագրությամբ՝ ըստ էսքիզ-նկարների: Պահարան (комод)՝ շպոնապատ МДФ-ի և կաղնու փայտի համադրությամբնվազագույնը 130սմ երկարությամբ, նվազագույնը 75սմ բարձրությամբ և նվազագույնը 50սմ լայնությամբ: Վերջնական չափերը՝ ըստ տեղադիրքի, հաշվի առնելով նաև այլ գույքերի տեղադրման սխեման: |

Առաստաղին պետք է փակցվի դեկոր՝ շպոնապատ ՄԴՖ-ից, պարամետրիկ դիզայնի սկզբունքով, ուղղանկյուն, նվազագույն 3քմ մակերեսով, որից պետք է կախվեն 3 հատ loft ոճի ճոպաններով և լեդ լուսատուներով ջահեր, որոնք պետք է համաձայնեցնել Պատվիրատուի հետ՝ ներկայացնելով առնվազն 3 նմուշ, որոնցից էլ կկատարվի վերջնական տարբերակի ընտրությունը: Տեսքը՝ ըստ էսքիզ-նկարների: Հարավային պատ (հեռուստացույցի հատված) Պատի ամբողջական երեսպատում ըստ էսքիզ-նկարների, փայտային հատվածները՝ շպոնապատ ՄԴՖ-ի և կաղնու փայտի համադրությամբ, կանաչ հատվածը՝ փորագրված ՄԴՖ, բարձրակարգ ներկերով և լաքով եռաշերտ մշակմամբ: Բարձրորակ լեդ լուսավորության նախատեսում՝ համաձայնեցնելով Պատվիրատուի հետ: Հյուսիսային պատ (դեկորատիվ հատված) Ամբողջ պատի երկայնքով շպոնապատ ՄԴՖ-ով հավաքել շնջանակ, որի մեջ 3D ձևաչափով պետք է հավաքել սաղարթախիտ տերևներ, իսկ կենտրոնում Մասիս համայնքի մետաղական տարբերանշանը՝ բարձրորակ և քողարկված լեդ լուսավորությամբ՝ ապահովելով տարբերանշանի եզրային լուսավորությունը: Ընդ որում, տարբերանշանը պետք է համաձայնեցնել Պատվիրատուի հետ՝ ներկայացնելով տարբերանշանի լուծման նվազագույնը 3 աշխատանքային էսքիզ, որոնցից էլ կատարվելու է վերջնական տարբերակի ընտրությունը։ Տերևները պետք է լինեն մի քանի (նվազագույնը 5) հարթության վրա՝ 3D էֆեկտ ստանալու համար: Դեկորատիվ պատը՝ տերևների հատվածը, պետք է ձևավորել կանաչ գույնի օրգանական ապակուց (3-4մմ հաստությամբ, բազմաշերտ): Ապահովել դեկորատիվ պատի ամբողջական լուսավորությունը: Նյութերը համաձայնեցնել Պատվիրատուի հետ: Խորհրդակցությունների սեղան և փափուկ կահույք Սեղանի երկարությունը՝ 300-350մմ, կենտրոնում փոսորակ՝ ծաղկային կոմպոզիցիաներ տեղադրելու համար: Սեղանը պետք է ունենա էլիպսաձև տեսք, սեղանածածկը՝ երկշերտ, 36-40մմ հաստությամբ ՄԴՖ-ից պատրաստված, ամբողջությամբ ներկապատ և լաքապատ, ոտքերը կարող են լինեն մետաղկան կամ նույն ՄԴՖ նյութից կամ երկուսի համադրությամբ (համաձայնեցնել Պատվիրատուի հետ): Սեղանի կողքին դրվող աթոռներն՝ ըստ էսքիզ-նկարների, նույնանման, ընդհանուր թվով 14 հատ, համաձայնեցնելով Պատվիրատուի հետ՝ ներկայացնելով առնվազն 3 նմուշ, որոնցից էլ կկատարվի վերջնական տարբերակի ընտրությունը։ Փափուկ կահույքը ներառում է՝ անկյունային բազմոց, երկու բազկաթոռներ, դեկորատիվ բարձեր (նվազագույնը 4 հատ) և կլոր գրասեղան՝ շպոնապատ ՄԴՖ-ի և կաղնու փայտի համադրությամբ, Փ120-140սմ, բարձրությունը՝ 55սմ: Անկյունային բազմոցի երկարությունը՝ 500-600սմ: Փափուկ կահույքի՝ բազմոցի և բազկաթոռների հիմնակմախքը՝ փայտից, սպունգը՝ 40կգ/մ3, երեսպատված բարձրորակ կտորով, բազկաթոռների ոտքերը փայտից, ամբողջական տեսքը՝ ըստ էսքիզ-նկարի, իսկ գույնը համաձայնեցնել Պատվիրատուի հետ: Կահույքի չափերը պետք է համադրելի լինեն տվյալ հատվածում էսքիզով ներկայացվածին՝ պահպանելով դրանում առկա հեռավորությունները և դիզայնը: Այլ պայմաններ Տեխնիկական բնութագրում և էսքիզ-նկարներում առկա անհամապատասխանությունների դեպքում

| | |
|---|---|
| | հիմք են ընդունվելու են էսքիզ-նկարները` բացառությամբ խորհրդակցությունների սեղանի շուրջ դրվող աթոռների: Ապրանքների պատրաստման համար օգտագործվող նյութերը պետք է լինեն նոր (չօգտագործված): |

# ПОЛНОЕ ОПИСАНИЕ

**предлагаемого товара**

МРН ООО в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ԱՄՄՀ-ԷԱՃԱՊՁԲ-25/40 ниже представляет полное описание предлагаемого им товара.

| Номер лота | Предлагаемый товар |
|---|---|
| | технические характеристики |
| 1 | |